

- » — » 24 եթէ ոչ նախ երթեալ հա- եթէ ոչ նախ երթայ և հաշտի ընդ եզ-  
նի ընդ տրամեալ եզրօրն բարն տրամեցելոյ
- » — » 27 յարուցանիցեն զսիրտ քո ծանրացուցանեն զմիտս քո
- » — » 35 հաճել ընդ ընկերին հաշտել ընդ ընկերին
- » — » 38-39 ընդ հեթանոսս համարեալ իրրև զհեթանոսս համարեալ եմք անըն-  
եմք, զի անընդունելի ի- զունելի աղաւթիւք, և եթէ աղաւթքն  
ցէ... անընդունելի իցեն...
- » 105 » 14 այլ աւուրք բազմաք հեռա- այլ աւուրք բազմաք հեռանան  
նան
- » — » 17 ի սուրբ խորհրդոյն ի մար- ի սուրբ և ի կենարար մարմնոյն Քրիս-  
մնոյն և յարենէն Քրիստոսի տոսի.
- » — » 19-20 կարծես պատիւ համարել կարծէ պատիւ Աստուծոյ համարել ըզ-  
Աստուծոյ չմերձենալ ի խոր- չմերձենալն ի սրբութիւն խորհրդոյն,
- » — » 30 միթէ փասեցա՞ր ինչ. այլ միթէ փասեցա՞ր ինչ. ո՛չ, այլ վարձս...
- » — » 32 ցնտաւոր (Տշ. Կէնէ-կէնէ- ցնտաւոր. — (Գնէ-կէնէ և «ցնտաւոր»  
ցնուտ, ցրտուտ, քառ- քառ Ան-յէնէ Բաւար-նէ Բեւէն)
- » 106 » 22 զի բարկութիւն է աղա- զի ի բարկութենէ է աղաղակ և կոխ  
ղակ և կոխ
- » — » 26 իջեալ զաղարէ իրրև զհուր իջեալ զաղարէ իրրև զհուր
- » — » 30 ի ժամ ցասմանն յուզելոյ Կռեւէ. եւ զորբօքումն բարկութեա-  
նըն ցածուցանես:
- » 107 » 5 պարզեւք կան ի միջի ու- պարզեւք կան առաջի աւսոխացն (.)  
սոխացն և կազոցն և կազացն (.)
- » — » 19 և զգութ որդւոց իւրեանց և զգութ որդւոց ուրացան.
- » — » 23 եզրօրն տրամելոյն եզրաւն տրամեցելոյ
- » — » 24-25 ընդէ՞ր ծանրացուցանես ըզ- ընդէ՞ր կարծրացուցանես զսիրտ քո  
սիրտ քո աղաչել զեզրայրն չաղաչել զեզրայրն

(Շարունակելի)

Ե. Ե. Դ.

## ՄԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ

ԵՊԻՊՈՑՈՍԻ ՀԱՅՈՑ ՀԻՆ ԵՒ ԱՐԴԻ ԵՒ Ե-  
ՂՆՈՒՆԵՐԸ, ԵՒ ՊԱՏՄԱՌԹԻՒՆ ԵՒ ՆՈՒՆ-  
ԹՈՒՆ Ս. ԴԵՐԴՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԷՉ ՆՈՐԱ-  
ՇԻՆ ԵՒ ԵՂՆՈՒՆ ԴԱՆԻԵԼԻ (Դեկ) Թ. Ե. Դ.  
Տպ. Ճարեք-Պաշտօնարար Դանիել—1927. 8° էջ 122.  
Դիմ 10 Ե. Դ. (Դրոյկիս ամբողջ հասոյքը  
յտակացուած է Դանիելի Հայ օրրոտիկներու  
նպաստի գործին):

Եղիպոսի Առաջնորդ Քաղով Մրազան իւ այս  
պատկերազարդ գրոյկով շատ քանակաւ նպաստ մը  
կ'աւելցնէ հայ գաղութներու պատկերազարդ վրայ, որ  
դեռ ամէն մասամբ չէ մշակուած սիրելի մարտիկ կե-  
սով: Բայց այսպիսի յուր և խնամտ աշխատութիւն-  
ներով է որ կրնայ կազմուիլ հայ գաղութներու ընդհա-  
նուր պատկերին մը, որ հաւկապարար պէտք է զը-  
ռի օր մը:

Անուշտ այս գրոյկը եղիպոսի հայ գաղութին

պատկերներ չէ ուղղակի. բայց իւր մեծ լոյս կը սրբի-  
նէ Նեղոսի օտոյած հողերուն մէջ հաստատուած հայ  
գաղութներու ծագումնի վրայ. վասն զի գաղութին  
կենսակի բարգաւաճումն սովորական երեւոյթն է եկե-  
ղեցիներ շինել իւր շատ տեղաւորումէ ետք:

Հիւսիսային Ասիական եկեղեցիներ վաղեմի հաղա-  
հալքութեան քանքարեմ ըլլալէ ետք. Քրիստոնէու-  
թեան ալ առաջին դարերուն մէջ, նշանաւոր եղան իրենց  
ծաղկեալ եկեղեցիներով:

Յարգանքով եւ Նեղոսի շքանքով երկիրներու  
մէջ առեւտրական եւ հաղափական յարաբերութիւններ  
շատ հին են, այնպէս որ Պաղեստինի Քրիստոնէացումը  
շատ վաղէ պիտի ազդէ եղիպոսի վրայ. Արդէն Թէբայի-  
սի անապատներ Անտոն նշանաւորէն (+ 356) ականա-  
հալք հանած էին, եւ ամէն ազգէ ուխտաւորներ ե-  
րուսաղէմ այցելելու առիթով կը փախաւէին եղիպո-  
սի անապատներն ալ տեսնել. իսկ Հայեր այն մարդին  
մէջ ալ եւ չմայրին ուրիշ ծագումներէ:

Առեւտրական գործերով Հայոց գաղութը հին պէտք է  
ըլլայ եղիպոսի մէջ, թէն դեռ այդ հմութիւնը քու-  
կանով մը նշանակելու վիճակին մէջ չենք:



Թորգոմ Սրբազանն ալ, պատմական նմազոյն տոխնէրու չգոյութենէն, Ֆարսիմանց շրջանով կը սկսի իր զործին առաջին գլուխը, եւ այնպէս կը կարծէ որ շէշայեր, իրեն կազմակերպեալ զաղաւթ, եղիպսոսի մէջ գոյութիւն ունեցած են ժԱ. դարուն երկուրդ կէսէն յետոյ միայն:

Բայց կարելի չէ բոլի քէ անկէ յառաջ հայ զաղաւթներ չկային Նեղոսի ափերուն վրայ, որովհետեւ ե. քէ 1074-1177, իր ամբողջ դար մը, ժարիման հարստութեան աւեճ հայ վզուկներ կարելու ժամանակցութիւն ունեցան եղիպսոսի հաղափական եւ զինուորական վարչութեան մէջ, պէտք է ընդունիլ քէ այդ վզուկներ հոն՝ եղիպսոսի մէջ գոյութիւն ունեցող հայ զաղաւթի գաւազներէն էին, եւ քէ անոնց իշխանութեան զաւթ գրանուած աւեճ միայն կարելի եղաւ նիւնարելի փառաւոր եկեղեցիներ, փոխանակ անփառ ու անփառանակ աղօթաեղիներու:

Թորգոմ Սրբազան արդէն գտած է ՆԼ. (=981) քր. ակնարկով խաչար մը (էջ 10-11), որ ինքնին պատմական հաւաստիք մըն է աւելի նմազոյններուն հաւանական գոյութեան:

Գործին Ա. Մասը (էջ 9-66) շատ հետաքրքրական է իրեն պատմական ուրուպիմ, հաստատած նմախոսական եւ ժամանակագրական տօփիւմներով:

Գրեյկիս Բ. Մասը (էջ 67-112) նուիրուած է Գանիքի նորէն Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյն պատմութեան:

Այս մասին մէջ, նոր եկեղեցիի մը պէտքին, եղիպսոսեան Գրիգորի անձին եւ կտակին վրայ հաւելաւոր տեղեկութիւններ տալէ ետք, Թորգոմ Սրբազան մտնումնայն կը նկարագրէ եկեղեցւոյ շինութեան նախապատրաստութիւնները, հարստացեալութիւնը, շինութեան սկսուիլը, նիւնարելը, շինուածական աշխատութիւնը, զանգուկները, ներսմասի նկարագրութիւնը, նկարներ, մազայիւնները, զենայարկը, ջանքեր, առաջնորդական արքայ, էւ այլն: Եկեղեցւոյ յատկապէս, կառուցումնայն պատկեր, ամբողջ եւ մասնակի, որմանկաներու եւ մազայիւններու նկարներն ու նկարագրութիւնները, ջանքերու ուրուպիմները, այս գրեյկը կը կենդանացրեն՝ պատմական իդրամիտ աշխատութեան մը կենիւր դրուելով ստոր վրայ:

Այս բոլոր այնպէս մը գրուած ու նկարագրուած են որ կրնան նոյն իսկ նեւտարներու մէջին մէջ պատկերացնել Ս. Գ. ԼՈՒՍԱՆՈՒԹԻՉԸ, որ կը ներկայացնէ Հայկական ճարտարապետութիւնը, իրեն համադրութիւնը Հայաստանի նիւն եկեղեցիներէն հանի մը նշանաւորներու տնին եւ զիծերուն, յոյսած եւրոպական արդի ճարտարապետութեան նաեւով:

Քանի որ Փետր. 12ի հանդիսաւոր օծումով արմատարին ասացաւ Գանիքիի նորէն եկեղեցին, կ'ուզենք զաղաւթ մը տալ Սիոնի ընդերքովներուն այդ տնին:

Իրիգոր եղիպեան (ծն. 1833 Մյո. 25 — ք. 1911 Յն. 21) Գանիքիի մէջ ծնած՝ ընկի Պարսկահայ ծնողներէ, ուստական փոխ-նիպասաւ, 1906 Յունիս-Ենի կտակ մը կ'ստորագրէ, կտակակատար կարգելով Վեսի. Պողոս Փաշա Նուպար, որպէս զի իր մահէն Տաթի մը ետք կտակած կարծածները դրամի վերածուիլն եւ ձեռնարկելի եկեղեցւոյ շինութեան Գանիքիի մէջ վայելուչ տեղ մը:

Համաժառանգին պատեւազք եւ ուրիշ պատմանքներ

կը յաղաղեցնեն կտակին զործադրութիւնը, եւ վերջապէս 1917ին կը գնուի գետինը Տարա Աղատոսի (այժմ Տարա Նազըր) մէծ տղոցային վրայ 5280 հառակուսի մէր, որու 1000 հա. մէրը միայն կը յատկացուի եկեղեցւոյն: Ճարտարապետ կ'ընտրուի Պրն. Լեւոն Նաժիկեան, Փաշիկըն, որուն պատրաստած յատկապիմը կ'ընդունուի Գանիքիի Թեմական Ժողովին կողմէ՝ 1914ին: Շինութեան Յանձնաժողովը զործի կ'սկսի, նիւնարելը կը կատարուի 1924 Օգոս. 31. Կիր. Շինութեան զործը կը տեւէ մինչեւ 1927 Մայիս: Շինուածական աշխատութիւնը կը բաժնուի եւ ամէն ճիւղ իր գէշին ու վարպետին կը յանձնուի, առանց յառաճող մասնակցական խտրութեան:

Ազուր զուգադիպութեամբ մը Գանիքիի նորէն եկեղեցւոյն կառուցումը եւ օծումը կը համընկայի եղիպսոսի ինքնավար Թաղաւորութեան շրջանին, այնպէս որ էքէ մէջ կողմէն այս հոյակապ արքայադէպ արտայայտութիւնն է Հայ ժողովուրդի ոգւոյն եւ գեղարուեստաշիջական մարմնացումը անոր կրօնական զգացումներուն եւ զիտակցութեան, միւս կողմէն եղիպսոսի Հայութեան կորոզը է ա'ն, նոր եղիպսոսի Մայրաքաղաքին մէջ, շէշ հպաստ մը պատմական Գանիքիի բարեզարդութեան:

Այս ժամեկան զգոյնիկ վերջը դրուած են երկու զոգոյնիկ տաղեր, մին Նաւեկացւոյն հնարէն փերած լար մը, որ կը քրքուայ Սողոմոնեան Տաճարին ներսնումով, իսկ միւսը Վ. Թէքէնեանի հայաշունչ զգացումներէն հանաւէ մը, որ ծաքէ է Եկեղեցին Հայկականի վերայ, բանաստեղծական հաւաստի մը ազդակին տակ:

— Եկեղեցին Հայկական՝ բարձր քերթն է հաւաստին,

Իմ պապերուս որ եղէն զայն հար առ հար հանեցին:

Եւ երկեղէն իշուցին զայն ցոյ առ ցոյ, ամպ առ ամպ,

Ու բազում եղան անոր մէջ հանդարտութեամբ հաղորդութեամբ ...:

Սողոմոն երբ շինեց աւարեց երուսաղէմի Տաճարը, զգալուն աղօթքով մը նուիրեց զայն Իսրայէլի Աստուծոյն (Գ. Թրք. Ը. 26-53), եւ նրանալի այլափորութեամբ մը ոչ-իսրայէլացիներուն համար ալ բարեխօսեց, բնեղով՝

— « Եւ օտարը որ քու Եւրալէլ ժողովուրդէ չէ, բայց նեւու տեղերէ կուգայ լսելով քու մեծ անունիդ եւ հգոր ձեռնիդ եւ ամէն կողմ տարածուած բազկիդ համբար, եւ կ'աղօթէ այստեղ, լսեա քու երկնային բնակարանիդ եւ կատարեա այն օտարին խնդրուածները. որպէս զի երկրի բոլոր ցեղերը նանչնան քու անունդ եւ քու Եւրալէլ ժողովուրդիդ պէ՛ս վախճան ընդմէ, եւ զիտնան որ քու անունդ կուրած է այս տան վրայ զօր շինեցիս:

Իսկ մենք կը մաղթենք որ Գանիքիի այս նորէն եկեղեցին, որ Փետր. 12-ին հանդիսապէս արքագործեցաւ Լուսաւորիչ անունով եւ նուիրուեցաւ Աստուծոյ, ըլլայ լոյսի եւ խաղաղութեան խորհրդանշան մը եղիպսոսի հայրութեան մէջ:

Թորգոմ Սրբազանի զործաւորութեան զգաճական արդիւններէն յաւերժական յիշատակ մը պիտի ըլլայ Ս. Գ. ԼՈՒՍԱՆՈՒԹԻՉԸ Նեղոսի ափերուն վրայ, պատիւ բերելով եկեղեցւոյն հարեւորին, եկեղեցւոյն Հայութեան եւ եկեղեցւանուէ Առաջնորդին:

ԲԱՔԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ